

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ

ԾԱՌԸ

ՄԿՐՏԻՉ Լ. ՊՈՒԼՏՈՒՔԵԱՆ

ՊԷՅՐՈՒԹ
ՅՈՒՆԻՍ 2004

Անցեալի պատմութեան քննարկումը, ներկայի առարկայական արժէտորումը եւ ապագայի տեսլականը, հաւանական ներքին ու արտաքին զարգացումներուն տիրապետելու ուժականութեամբ, նախապայմաններ են մշակելու եւ յարմարաւետ մշտանորոգ միջոցներով պահպանելու ու այժմէականացնելու ազգային ինքնութեան էական տարրերը:

Մարդկային պահանջքներէն մէկն է ունենալ յստակ բայց ոչ սառած նպատակներ ու հաւատալ յուսալից ապագայի մը: Հաւաքական ինքնութիւնը կը կազմաւորուի հասարակաց արժէհամակարգի մը առանցքին շուրջ որ ուղղութիւն կու տայ մարդկային կեանքի վախճանականութեան (finality) եւ կը լուսաւորէ անոր իմաստը: «Ո՞ր կ'երթանք» հարցումը նախ պէտք է բաւարարուի վստահութեան զգացումով դէպի մեր ազգային առաջնորդներն ու անոնց որդեգրած ուղին եւ ապա, այն համոզումով որ անոնք ունին կարողութիւնն ու միջոցները, իրագործելու մեր էական նպատակները:

Սփիւռքի ազգային հեռակայ նպատակը կրնայ վերածուիլ խթանիչ ուժի, եթէ Սփիւռքի ազգային կառոյցներն ու Հայաստանի Հանրապետութիւնը, կը կարողանան համագործակցութեամբ օգտագործել մեր ազգային ամբողջական կարողութիւնները, ի նպաստ Հայրենիքի հզօրացման եւ Սփիւռքի գոյատեւման, որպէս զուգահեռ ապահովութեան խարխիսներ:

Կենդանական աշխարհի բնական ու շարունակուող բազմազանութիւնը գիտական բացայայտ իրողութիւն մըն է: Նոյն երեւոյթը կարելի է նկատել մարդկային պատմութեան բոլոր հանգրուաններուն, նախապատմական շրջաններէն մինչեւ համաշխարհայնացումի նորագոյն փորձը: Քաղաքակրթութիւններու ու մշակոյթներու հազարամեակներու պայքարը իր բազմաբնոյթ պատճառներուն առընթեր, դրսեւորած է ինքնավարութեան ու ազատութեան կենսական պահանջքը, իւրայատուկ ինքնութիւններու պահպանման միջոցով:

Որպէս ապրող էակներ, բնականաբար մաս կը կազմենք հաւաքականութեան մը: Մեր անհատականութեան մէկ մասը կը կազմաւորուի մեր իւրայատուկ կեանքի պայմաններուն բերմամբ, իսկ մնացեալը կը ժառանգենք ուրիշներէն, որպէս մշակոյթ, իր ամէնէն լայն իմաստով: Անհատ մը, եթէ զանազան պատճառներով, իր սկզբնական հաւաքականութենէն դուրս մնայ ու անջատուի իր մշակոյթի ակունքէն, անհատականութիւնը կը տկարանայ, ու բնագոյաբար կը հասնի նոր հաւասարակշռութեան մը, իւրացնելով այլ մշակոյթի մը տարբեր տարրերը:

Հաւաքական ինքնութիւնները կը կազմաւորուին զանազան դրդապատճառներով: Սակայն՝ ամէնէն բնական, նախնական ու տարածուած պատճառը կը մնայ, ցեղային կամ ազգային մշակութային ինքնութիւնը:

Մարդկային հիմնական իրաւունքներէն մէկն է իւրայատուկ ինքնութիւններու պահպանումը՝ անհատական ու հաւաքական: Տարբեր ինքնութիւններու գոյակցութեան կարելիութիւնը, միաժամանակ պատմական եւ ապրող իրողութիւններ են ինչպէս նաեւ՝ մշակութային փոխադարձ հարստացումի միջոց:

Ինքնութեան յեղաշրջումը բնական ու դրական երեւոյթ մըն է: Նոր պայմաններուն յարմարելով հանդերձ, կարելի է պահպանել էական մնայունը, միաժամանակ՝ ներմուծելով նոր արժէքներ, յանձնելով զանոնք ժամանակի դատաստանին:

Խմբային ինքնութիւնը ընկերային զօրակցութեան անհրաժեշտ զօդիչ տարրերէն մէկն է: Փոխադարձաբար, կազմակերպեալ ու գործնական զօրակցութիւնը խմբային ինքնութեան պահպանման ու զարգաման ամէնէն էական նախապայմանն է, նախնադարեան շրջաններէն մինչեւ համաշխարհայնացումի զարգացող գաղափարախօսութիւնը:

ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Որակական չափանիշներու հիման վրայ, կարելի՞ է սահմանել թէ ո՞վ Հայ է, կամ՝ ի՞նչ պէտք է ըլլայ, տուեալ աշխարհագրական տարածքի մը ու ժամանակամիջոցի մը մէջ: Որո՞նք են այն տուեալներն ու յատկանիշները որոնց միջոցով կարելի է բնորոշել Հայկական առանձնայատուկ ինքնութիւնը: Որո՞նք են այն առարկայական ու ենթակայական տուեալները որոնք կը գտնուեն Հայը ոչ-Հայէն:

Արդէ՞ք գոյութիւն ու՞նի Հայկական արժեհամակարգ «Paradigm» մը: Որո՞նք են մեր բարոյական ու մշակութային արժէքները: Գիտակի՞ց ենք անոնց գոյութեան որպէս անհատ եւ հաւաքականութիւն: Կը յարգե՞նք զանոնք որպէս նուիրական գործադրելի պատուիրան ու գործնական փոխ-յարաբերութիւններու կանոնագիր: Եթէ ոչ, պէ՞տք է ստեղծել, ինչպէ՞ս: Արժեքանական ի՞նչպիսի նկատումներով:

Մեր պատմական եւ մշակութային արժէքները, որքա՞նով մնայուն են եւ վերջնական, մանաւանդ՝ Սփիւքի այլազան քաղաքակրթութիւններու ճնշիչ ազդեցութիւնը նկատի առնելով:

Որպէս Հայ՝ գոյութեանական ի՞նչ յաւելեալ առաւելութիւններ կը վայելենք մեր քաղաքացիական իրաւասութիւններուն կողքին: Որպէս աշխարհասփիւռ տարագիր Հայեր, ի՞նչ անպատեհութիւններ կը դիմագրաւենք՝ անհատապէս եւ որպէս հաւաքանութիւններ:

Ինչպէ՞ս կարելի ստեղծել հասարակական փոխ-յարաբերութիւններու նոր համակարգ մը, համայնքային առաւելութիւններու գերակայութիւնը նկատելով անկիւնաքար՝ անհատական ապահովութեան ու բարօրութեան:

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Յաճախ, կը լսենք ու կը կարդանք, տարիներու ընթացքին լոզունքի վերածուած, բնագոյաբար կրկնուող նախադասութիւններ, առանց յամենալու զանոնք կազմող բառերուն իմաստին տարողութեան ու արժէքին վրայ:

Պահպանենք մեր ինքնութիւնը: Ասկայն, ինչպէ՞ս կրնանք պահպանել մեր ինքնութիւնը, առանց սահմանելու անոր էութիւնը: Ինչպէ՞ս կարելի է բնորոշել անհատական ինքնութիւն մը տուեալ հաւաքականութեան մը մէջ: Ի՞նչպէս կարելի է սահմանել մեր ազգային ինքնութիւնը նկատի առնելով զայն կազմող բաղադրիչ տարրերուն անհամար երանգները՝ ժամանակի, աշխարհատարածքի ու անհատներու հոգեմտաւոր ուրոյն կազմաւորումին մէջ:

Հաւաքականութեան մը ինքնութիւնը կը կազմաւորուի անցեալի ժառանգով ու ներկայի ընկերային, տնտեսական, մշակութային բարդ փոխ-յարաբերութիւններով: Դարերու պատմութեան կտակը, ընդհանրապէս գերծ ըլլալով կիռքերու գրոհներէն, կը վերածուի ազգային խորհրդանշաններու ու շաղկապող մասունքի: Ինքնութիւնը քարացած յատկութիւն մը չէ այլ՝ կը յեղաշրջուի նոր թափանցումներու մասնակի գտումով: Ինքնութիւն մը կը գոյատեւէ եթէ անխուսաբելի փոփոխութիւններուն կարենայ ապահովել կենսունակ շարունակականութեան բաւարար միջոցներ:

Հասուն ինքնութիւն մը կազմող բոլոր զգացումները հաւասար չափով զարգացած կ'ըլլան: Այդ զգացումներուն հաւասարակշռուած զարգացումն է որ թոյլ կու տայ իմաստաւորել ներկայի իրադրութիւնը, անցեալի փորձառութիւններու օգտագործումը, ինքնավստահ հանդուրժողութիւնն, յուսախափութիւններու կառուարումը, պատասխանատուութեան զգացումը, համերաշխութեան զգացումը, փոխ-յարաբերութիւններուն շնորհը, ապակեղորոնացումն եւ ներքին փոփոխութիւններ կռելու կարողականութիւնը:

Սփիւոքի ներկայ իրավիճակը վտանգուած է գոյութեանական յարափոփոխ ցնցումներէն, ընկերային վերիվայրումներէն, մշակութային աղաւաղումներէն եւ նպատակներու անորոշութենէն, եւ կը մնայ անկայուն հաւասարակշռութեան մէջ:

Վտանգը կարելի է դիմակայել եթէ, հետեւողական աշխատանքով, փորձենք ղեկավարել մեր հաւաքական ճակատագիրը, ներմուծելով նոր խթաններ, պատճառարկումներ եւ խայծեր, որպէսզի Հայ ըլլալը ունենայ իր գոյութեանական առաւելութիւնները: Առաւելութիւններ՝ հիմնուած հաւաքական ապահովութեան, կարեկցութեան, փոխադարձ մեցուկի, հաւաքական պաշտպանութեան, կազմակերպելու իրարօգնութեան, համագործակցութեան գործնապաշտ միջոցներով հասնելու «բարձրացիր, բարձրացուր» գաղափարի իրականացումին, բոլոր մակարդակներու վրայ: Հայ ըլլալու հպարտութիւնը հաստատուի զգացականէն անդին գործնական կեանքի առնելու եւ տալու գաղափարին վրայ, նիւթական ու բարոյական փոխ-շահաւէտութեան բացայայտ նկատառումներով:

Հայ ըլլալը, Հայերէն լեզուի գիտութիւնն ու գործածութիւնը կրնան ըլլալ անհրաժեշտութիւն, այն պարագային, երբ մեր ազգային կրտսերական պատկանելիութիւնը կը վերածուի ներգործական եւ նպատակասլաց աշխատանքի, իր անմիջական եւ համոզիչ գործնապաշտ արդիւնքներով: Արդիւնքներ՝ որոնք կարենան բաւարարել անհատական ու հաւաքական կեանքի մակարդակի ու որակի բարելաւման մարդկային էական պահանջները:

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ ՏԱՐԻԵՐԸ

Ինքնութիւնը կը բնորոշուի հասարակաց անցեալի ծիմային (genetic) կազմաւորումով, իւրայատուկ բնօրրանի մը գոյութեամբ, պատմական յարատեւ ներկայութեամբ եւ մշակութային շարունակուող նորարարութիւններով ու յիշողութիւններով, զանազան զգացումներու ամբողջութեամբ մը, ինչպէս նաեւ՝ ներկայի քաղաքական, հասարակական, ընկերային եւ տնտեսական պայմաններուն ազդեցութեամբ:

ԱՆՑԵԱԼԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Ինքնութեան ծառը իր աւիւնը կը ստանայ՝ արմատներէն: Առանց այդ աւիւնին ինքնութիւնը կը թառամի ու կ'անէանայ որպէս իւրայատուկ ինքնութիւն ու համամարդկային մշակութային հարստութեան յաւելեալ օղակ: Արմատները կազմուած են անցեալի յիշողութեան մնայուն գանձերով:

Բնօրրան

Հայկական բնօրրանի աշխարհագրական դիրքն ու երկրաբանական յատկութիւնները ունեցած են իրենց շատ կարեւոր ազդեցութիւնը, ազգային պատմութեան ու ընկերային մտածողութեան վրայ: Աշխարհագրական դիրքը եղած է նպաստաւոր՝ իր պաշտպանողական կարելիութիւններով ու հազուագիւտ պարագաներուն յարձակողական ծրագիրներ մշակուած են ու յաջողած: Մինչ՝ խոր ձորեր բաժնած են լեռները ու ստեղծած են հատուածական մտածողութեան ծիւնները:

Որպէս որոյն սկզբնական ու վերջնական հայրենիք ու հասարակական ապահովութեան մնայուն խարխիսի, Հայաստանի հողը սրբագործուած է դարերու ինքնապաշտպանութեան նահատակութիւններով:

Առասպելներ

Առասպելները կը ձեւաւորուին անկախութեան ու ազատութեան բնագոյային մղումին յաղթանակներով ու պարտութիւններով, առասպելական հերոսներու

տիպարներով, հիմնադրութեան ու իրայատուկ ինքնութեան կազմաւորումի հազարամեակներու յիշողութեամբ:

Դիցազներգութիւն

Դիցազներգութիւնը, Բարիի ու Չարի յաիտեմական պայքարի դրոյնով, անկարելի հաւաքական երազներու երեւակայական բաւարարումով, ժողովրդական բանաւոր յիշողութեան մէջ կը մնայ որպէս հոգեկան բալասան՝ շարունակական ողբերգութիւններու:

Պատմութիւն

Պատմութիւնը, իր առասպելական հերոսներով ու մշակութային նուաճումներով եղած է հպարտութիւններու աղբիւր ու ինքնութեան պահպանման կարեւոր ազդակ: Ճակատագրի չար դիպումով, պատմական յարատեւ արշաւանքներու քառուղիներուն վրայ գտնուելու հետեւանքով, հերոսական պայքարները իրենց մնայուն դրոշմը ձգած են ազգային նկարագրի կազմաւորումին մէջ: Բնութեան աղէտները, շարունակական արտաքին արշաւանքներու ստեղծած զանգուածային ողբերգութիւններն ու տեղաշարժերը իրենց ետին ձգած են պատմական վերքերու անհամար յիշողութիւններ որոնք սպիացած են վերապրումի անխորտակելի ու կրկնուող կամքով:

Իրայատուկ աշխարհահայեացք

Իրայատուկ աշխարհահայեացքը սնած է բնութեան ու շրջապատի ստեղծած ինքնուրոյն մտածելակերպով, կեանքի դժուարութիւններուն ու հաճոյքներուն արդած վախերով ու ցնծութեամբ, ապագայի հանդէպ դիրքորոշումի անկարողութեամբ ու մշտական հալածանքներու հոգեբանութեամբ:

Իրայատուկ աշխարհահայեացքը կը բնորոշուի իր գիտակցական դրութեամբ, ազգային կրօնի արժէքներու դրութեամբ, համոզումներով, հաւատալիքներով, մտայնութեամբ, զգացումներով, հաւաքական դիրքորոշումներով, կարծիքներով, հոգեբանական իրայատկութիւններով, սովորութիւններով, վարքով ու բարքով:

Աւանդութիւններ

Աւանդութիւնները, որպէս ազգային արժէքներ, դրոշմուած կը մնան կրօնական հաւատքի մարտիրոսութեան անհամար անուններով, վաղնջական ծեսերու զանձարանով, աշխարհագրական շրջաններու իրայատուկ սովորութիւններով, բնութեան ու արտաքին ուժերու ազդեցութեամբ կոփուած նկարագիրով, բնաւորութեամբ, բարդոյթներով, արժանիքներով ու անգիր օրէնքներով:

Մշակոյթ

Որպէս չյայտարարուած գաղափառախօսութիւն, արուեստի իրագործումներով հետապնդելով անկարելի երազներ, հազարամեակներու պատմական յիշողութեան ողբերգութիւններով, ֆիզիքական պարտութիւններով ու բարոյական յարթանակներու կառչող վերապրումի յամառ միջոցներով, գուսան աշուղներու բանաստեղծական թրիչներով, ճարտարապետական կոթողներու անժամանցելի իրաւունքներու քարակերտ փաստերով, խաչքարերու խորհրդանշաններուն բազմազանութեամբ, ձեռագիր մատենաներու անհաւատալի վերապրումով, գորքագործութեան ու մետաղագործութեան համբերատար ծննդաբերութեամբ, հոգեւոր ու աշխարհիկ գրականութեան բանաւոր ու գրաւոր աւանդներով:

Լեզու

Ինքնութեան կազմաւորումը կը սկսի ու կը զարգանայ լեզուով, որպէս շաղկապ անհատին եւ ուրիշներուն միջեւ: Գաղափարներու փոխանակումը տուեալ լեզուի մը միջոցով կը կաղապարէ անհատին վարքն ու բարքը հասարակաց առանցքի մը շուրջ: Լեզուն է որ կը կաղապարէ հաւաքական իմաստներ, արարքներ, մտածողութիւն ու զգացումներ, ժամանակի ու միջոցին մէջ:

ԶԳԱՑՈՒՄՆԵՐՈՒ ԲՈՒՆԸ

Ինքնութեան ծառին բունը կազմուած է բազմազան զգացումներէ որոնք անցեալի արժէքները կը շաղկապեն ներկայի գոյութեան կան պայմաններուն: Բունը կը մնայ հաստատուն սնանելով դարերու ընդերքէն հասած կտակով, որոնք գերծ ըլլալով կիռքերու գրոհներէն, վերածուած են ազգային հաւատամքի եւ որպէս շաղկապող մասունք, ներշնչումի աղբիւր են բոլորին:

Ինքնութիւն մը կը սահմանուի նիւթական, ընկերային եւ տնտեսական առարկայական չափանիշերով եւ զանազան զգացումներու ամբողջութեամբ մը.

Տարբերութեան զգացումը

Տարբերութեան զգացումը խումբի մը ինքնութեան հիմներէն մէկն է, եթէ այդ տարբերութիւնը կը բխի իւրայատուկ կեանքի մը պատմական ակունքէն: Ինքնութեան զգացումը զօրաւոր է երբ տարբերութիւնը մեծ է ուրիշ հատուածներէ: Ինքնութեան տազնապը կը սկսի երբ տարբերութիւնները կը նուազին մշակութային աւելի ուժականութեամբ լեցուն հաւաքականութեան քաշողական ազդեցութեան տակ: Տարբերութեան զգացումը – գերակայութիւն կամ ստորակայութիւն – կը դրսեւորուի իր պատմութեան, մշակոյթին, արժէքներուն, վարք ու բարքին առանձնաշատկութիւններուն, մակարդակին, որակին ու կենսունակութեան միջոցներով:

Տարբերութեան զգացումին գոյատեւումը՝ իր ցեղային, պատմական ու մշակութային բաղադրեալներով, պայմանաւորուած է շրջապատի այլ ինքնութիւններու յարաբերական տկարութեամբ: Գերակայութեան զգացումը, առ արկայական կամ ենթակայական, ինքնութեան պահպանման կարելոր ազդակներէն մէկն է: Հաւասարութեան պարագային ընկերային ու տնտեսական ազդակներու հետ մրցակցութեան անդինքը կը ձգեն անորոշութեան մէջ: Մինչ՝ ստորակայութեան զգացումի պարագային, ինքնութեան ազատութիւնը կ'ըլլայ առազընթաց:

Ինքնա-արժեւորումի զգացումը

Անհատի մը կամ հաւաքականութեան մը ինքնա-արժեւորումի զգացումը կը կազմաւորուի իր անցեալի ու ներկայի յաջողութիւններով ու ճախողութիւններով: Ինքնապատկերի հանդէպ եղած համարումը կը զօրանայ կամ կը տկարանայ երբ բաղդատուի ուրիշներուն հետ կամ բացարձակ մտատիպարի մը հետ: Յուսալքումը կը սկսի երբ հաւաքականութեան մը ինքնապատկերը կը վատթարանայ որպէս արդիւնք արժէքներու թուլացումին ու նպատակներու անորոշութեան:

Ինքնավարութեան զգացումը

Ինքնավարութեան զգացումը կ'ընդգրկէ մտային ու զգացական տարբեր ոլորտներ որոնք կրնան ըլլալ պատմական աշխարհայեացքի բեկորներ, յիշողութիւններ, առասպելներ, սովորութիւններ, ներկայ կեանքի մակարդակ ու որակ, կրօնական, բարոյական, ընկերային ու գործնական կեանքի արժէքներ, ապագայի բարօրութեան եւ յաջողութեան տեսիլք եւ ծրագիր որոնք կը ձգտին անկախութեան ու ինքնակառավարման ու ազատութեան, որպէս առանձին ինքնութիւն:

Վստահութեան զգացումը

Վստահութիւնը շատ կարելոր դեր ունի ինքնութեան մը կազմաւորումին ու պաշտպանումին համար: Կազմակերպուած վստահութեան զգացումը լինելիութեան իւրայատուկ կամքի մը շուրջ կ'ունենայ խանդավառ մասնակիցներ, իրենց իւրայատուկ դերով: Վստահութեան կորուստը եւ արժէքներու անկումը կ'առաջնորդեն դէպի անտարբերութիւն, կրաւորականութիւն եւ անհատական, անձնասիրական հակազդեցութիւններու:

Հերոսը, բոլոր ժողովուրդներու պատմութեան մէջ այն անձն է որ իր տեսիլքով կը զատորոշուի ուրիշներէն ու զայն իրագործելու մտաստեւերումին մէջ կը մարմնացնէ հաւաքականութեան մը ակնկալութիւնները, նոյնիսկ եթէ անոնք թուին ըլլալ անկարելի: Հերոսներու բացակայութեան, բոլոր մակարդակներու յանձնառու անձեր, կը նկատուին ղեկավարներ, եթէ կարենան բաւարար վստահութիւն ստեղծել իրենց անձին ու ծրագիրներուն հանդէպ:

Միութեան զգացումը

Հաւաքական ինքնութիւնը նախ եւ առաջ զգացական մասնակցութիւն մըն է հաւաքական էութեան: Միութեան զգացումը ցայտուն կը դառնայ հաւաքական դժուարութիւններու ու ողբերգութիւններու պարագային: Բնական աղէտները, պատերազմական գործողութիւնները, հալածանքներն ու այլ տեսակի վտանգներ կը ստիպեն կեդրոնանալ հասարակական հարցերուն վրայ, անհատականը նկատելով երկրորդական:

Միութեան զգացումը կ'ենթադրէ ունենալ հասարակաց ճակատագիր, հաւատարմութիւն, յաջողութիւններու գոհունակութիւն, ձախողութիւններու ցաւ, նիւթական ու բարոյական հասարակաց շահ:

Միութեան զգացումը գոյութեանական ապահովութեան հոգեբանական կարեւոր յենարաններէն մէկն է: Հասարակութեան մը միութեան զգացումը կը զօրանայ երբ մարդկային հիմնական իրաւունքները կը պաշտպանուին: Միաժամանակ, հասարակութիւնը կ'ըլլայ աւելի արդիւնաբեր՝ միութեան զգացումով:

Միութեան զգացումը կ'ենթադրէ նաեւ հաւատարմութիւն՝ նոյն խումբին պատկանող, նոյն ճակատագիրին ենթարկուած բոլոր անհատներուն հանդէպ:

Միութեան զգացումը գոյութեանական ապահովութեան հոգեբանական կարեւոր յենարաններէն մէկն է: Հասարակութեան մը միութեան զգացումը կը զօրանայ, երբ մարդկային հիմնական իրաւունքները կը պաշտպանուին: Նոյնպէս, հասարակութիւնը կ'ըլլայ աւելի արդիւնաբեր, միութեան զգացումով:

Զօրակցութեան զգացումը

Զօրակցութեան զգացումի բացակայութեան, հաւաքականութիւն մը կը կորսնցնէ իր էութիւնը ու կը վերածուի անտէր ու անտարբեր բազմութիւններու, որոնք իրենց անհատական միջոցներով, կը փորձեն բաւարարել իրենց գոյութեանական ու փոխ-յարաբերութիւններու կարիքները:

Եթէ, «միութիւնը զօրութիւն է» եւ «բարձրացիր բարձրացուր» գաղափարներուն հաւատալով, նպատակադրենք այդ սկզբունքները գործնականացնել մեր հասարակական յարաբերութիւններուն ընթացքին, շատ հաւանաբար, ժամանակի ընթացքին կը կարողանանք հասնիլ գործնապաշտ ու դրական զօրակցութեան մակարդակի մը, ուր ազգային ինքնութեան պահպանումը կ'ըլլայ բնական արհրաժեշտութիւն, իր գործնական կենսաբի առաւելութիւններով:

Պատկանելիութեան զգացումը

Պատկանելիութեան զգացումը կը մնայ վառ, եթէ անհատական ու հասարակական հպարտութիւնները գերազանց են ու մնայուն: Նաեւ՝ եթէ պատկանելիութիւնը կ'ապահովէ բարոյական գոհունակութիւն, տնտեսական ապահովութիւն ու ընկերային առաւելութիւններ: Պատկանելիութեան զգացումը կը զարգանայ հաւատարմ անդամակցութեան զգացումով, որ կ'ենթադրէ պատկանիլ եւ նոյնանալ տուեալ հաւաքականութեան մը հետ, բաժնելով զգացական կապեր, համայնքային ոգի, հասարակաց անցեալ:

Որպէս իրայատուկ ինքնութեամբ ծնեալ անհատ, բաւարար չէ զայն ժառանգաբար ամբողջ կենսք մը պահել: Պատկանելիութեան զգացումը կը կը տկարանայ, եթէ տուեալ հաւաքականութեան մաս կազմելու ապահովական, տնտեսական,

բարոյական, հոգեբանական առաելութիւնները կորսնցնեն իրենց բաղդատական գերակայութիւնը:

Յարակցութեան զգացումը

Յարակցութեան զգացումը կը զարգանայ, ապրելով նոյն աշխարհագրական միջավայրի մէջ, աշխատելով նոյն տնտեսական դրութեան մէջ, բաժնելով՝ նոյնանման յաջողութիւններու հաճոյքն ու դժուարութիւններու ընկճումը:

Ընկերային փոխ-յարաբերութիւններու մշակումով, մենք կ'ընդունինք ուրիշը, ինչպէս որ է, ու կ'ընդունուինք ուրիշին կողմէ: Փոխադարձ յարգանքով, սիրով ու ճանաչումով կրնանք հասնիլ բարեկամութեան մակարդակին:

Բնականաբար, բարեկամութիւններու ցանցին պատկանող անձերուն արժէքները, իրենց ազդեցութիւնը կ'ունենան որպէս մեր ինքնութեան որոշիչ տարրերէն մէկն է:

Արժէքներու զգացումը

Հասարակաց կրօնական, բարոյական, հասարարական, մշակութային, ընկերային, ընտանեկան, գործարարական արժէքներու պահմանումն ու անոնց առօրեայ գործադրութեան բնական երեւոյթները կը ստեղծեն իւրայատուկ ինքնութեան մը կարեւոր օղակներէն մէկը:

Կազմակերպուած վստահութեան զգացումը լինելիութեան իրայատուկ կամքի մը շուրջ

Կենթադրէ հասարակաց պատմական աշխարհահայեացք, կազմակերպուած հասարարական կառոյցներ հայթայթելու համար ներկայ կեանքի յարաբերաբար բարձր մակարդակ եւ հաւատաւոր տեսիլք, ապագայի յաւելեալ բարօրութեան ու յաջողութեան:

ՆԵՐԿԱՅԻ ՃԻՒՂԵՐՆ ՈՒ ՏԵՐԵՒՆԵՐԸ

Ճիւղերն ու տերեւները, կրնան վտանգուիլ արտաքին անբարենպաստ պայմաններէն գոյութեանական յարափոփոխ ցնցումներէն, ընկերային վերիվայրումներէն, մշակութային աղաւաղումներէն եւ մանաւանդ՝ նպատակներու անորոշութենէն: Անոնք՝ կը մնան երերուն, հովերու ու փոթորիկներուն դէմ, վտանգելով բունն ու արմատները՝ ցամքեցնելով անցեալի ամուրջէն սնանող զգացումներու աւիւնը:

Ճիւղերը կ'աճին ու կը մնան կանանչագարդ երբ հետեւողական աշխատանքով կը փորձենք ղեկավարել մեր հաւաքական ճակատագիրը, ներմուծելով նոր խթաններ եւ պատճառարկումներ որպէսզի Հայ ըլլալը ունենայ գոյութեանական առաելութիւններ: Հայ ըլլալու հպարտութիւնը հաստատուի զգացականէն անդին գործնական կեանքի հաւաքական ապահովութեան ու բարօրութեան գաղափարին վրայ, հասարարական իրաւունքներու ու պարտաւորութիւններու արժեհամակարգի մը պարունակին մէջ: Հայ ըլլալը, Հայերէն լեզուն գիտնալը կրնան ըլլալ անհրաժեշտութիւն այն պարագային, երբ մեր ազգային պատկանելիութիւնը կը վերածուի ներգործական եւ նպատակասլաց աշխատանքի իր անմիջական ու համոզիչ գործնական, դրական, արդիւնքներով եւ զգացական հպարտանալի գոհունակութիւններով:

Ապրող ինքնութիւնը կը զարգանայ, կը ճիւղաւորուի ու կը սնանի նոր պայմաններուն յարմարելու իր ընդունակութեամբ եւ բազմաթիւ այլ յատկութիւններով:

Ֆիզիքական կազմակերպութեամբ

Յետ-Յեղասպանութեան, Սփիւռքի տարածքին, առաջին սերունդին կեդրոնաձիգ մտածողութիւնը բնագոյական դրսեւորումն էր հաւաքական ապահովութեան, պաշտպանութեան ու նախնական գորակցութեան պահանջքին: Ապրելով, մեծամասնութեամբ Հայ ընտանիքներէ կազմուած թաղերու ու շրջաններու մէջ, եկեղեցին, դպրոցն ու դրացիները կը կազմէին սահմանափակ միգրոգոզ մը, իւրայատուկ ժամանակաւոր առաելութիւններով ու սահմանափակումներով:

Ժամանակի ընթացքին, յատկանշական երեւոյթ էր Հայ համայնքներու բնական կեդրոնախոյս տարտղումը, նոյնիսկ նոյն քաղաքին մէջ, իր անհատական առաւելութիւններով ու հասարակական անպատեհութիւններով՝ մանաւանդ սկզբնական ինքնութեան արագացող աղաւաղումով:

Կարողականութեամբ

Տուեալ համայնքի մը կարողականութիւնը կը գնահատուի իր ստեղծագործական մտածողութեամբ, հասարարական կազմակերպութիւններով, տնտեսական աճի մակարդակով, փոխ-յարաբերութիւններու ցանցով ու նպատակասլաց կազմակերպեալ աշխատանքով՝ անհատական ու հաւաքական մակարդակներու վրայ:

Անցեալի յիշողութեամբ

Անցեալի յիշողութիւնը, կը մնայ զգացական պատուար մը պահպանելու համար պատմական արժէքներուն վերապրող նշխարները: Միաժամակ՝ պատմական հաւաքական կողմնորոշումներու յիշատակութիւններու մեկնաբանութիւնը, ներկայի ու ապագայի հասարարական տագնապներու պարագային, կրնայ իր օգտակարութիւնը ունենալ, շիտակ որոշումներ առնելու համար: Նոյնիսկ եթէ՝ պատմական նոյն սխալները չգործելով հանդերձ, տարբեր միջոցներ գտնենք նոր սխալներ գործելու:

Տնտեսական, հասարարական ու մշակութային կառոյցներով

Տնտեսական զարգացումի որակն ու մակարդակը սերտօրէն առնչուած են աւանդական, ընտանեկան, ու տեղական ընդհանուր տնտեսական կացութեան հետ: Վաճառականութիւնն ու փոքր ճարտարարուեստը, որպէս անմիջական զարգացում արհեստներու, եղած են Հայկական տնտեսական մախասիրութիւններու կարեւորագոյն մարզը:

Տնտեսական որակն ու մակարդակը մնացած են սահմանափակ, անհատական մախսաճեռութիւններու ծիրին մէջ, ու միայն բացառիկ առիթներով հասած են կազմակերպեալ մեծ հաստատութիւններու ու միջազգային մրցակցութեան չափանիշները բաւարարող ստեղծագործական մտածողութեան ու յաջողութեան:

Տնտեսական զարգացումի որակն ու մակարդակը իրենց ազդեցութիւնը ունեցած են անհատական ու հաւաքական նկարագրի կազմաւորումին վրայ: Ապրուստի անմիջական ապահովութեան մտահոգութենէն փխող կարճ ժամկետային նկատառումներով, բաւարարուած են անձնական աշխատասիրութեամբ, իրագործելու սահմանափակ նուաճումներ:

Անհատական գործառնութիւններու անհատապաշտ մօտեցումը դրսեւորուած է մաւր մեր հասարարական կառոյցներուն մէջ, երկար ժամկետային ծրագիրներու մշակման հանդէպ մեր ունեցած անտարբերութեամբ ու անոնց տնտեսութեան անճառակութիւններով:

Տնտեսական ու ընկերային նորարութիւնը եղած է հազուագիտ ու անբաւարար:

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Հաւաքական իրայատուկ ինքնութեան կազմաւորումը, հաստատումն ու աղաւաղումն բնական երեւոյթներ են եւ ունին իրենց արտաքին ու ներքին բազմաի ու բազմաբնոյթ դրդապատճառները:

Օրինակ ունենալով Լիբանանահայ համայնքի կազմաւորումը, զարգացումն ու այլափոխումը, որպէս իրայատուկ ինքնութեան դրսեւորումի յարաբերաբար

երկարակեաց մէկ օրինակ, կարելի է մօտաւոր համայնապատկեր մը ուրուագծել Սփիւռքի տարագիր Հայութեան ինքնութեան տազնապին բնոյթին, հանգրուաններուն ու տարողութեան մասին:

ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆ

1915-ի ողբերգութեան յաջորդող առաջին տասնամեակները եղան ժամանակաւոր գաղթականութեան եւ անմիջական գոյութեան հարցերու լուծման տարիներ: Մակայն՝ տարագիր Հայութեան ժամանակաւոր տեղադրութիւնը վերածուեցաւ տեսական նոր քաղաքացիութիւններու, հիւրընկալ բազմազան երկիրներու մէջ:

Յետ-Յեղասպանութեան, Թրքախօս վերապրող Տարագիր Սերունդին, անմիջական մտահոգութիւններն էին տնտեսական ապահովութիւնն ու յաջորդող սերունդներուն Հայեցի Դաստիարակութիւնը: Հայերէն լեզուի ու պատմութեան ուսուցումը կը նկատուէին հիմնական՝ տարագիր Հայուն մշակութային ինքնութեան պահպանման սրբազան առաքելութեան մէջ: Միջին Արեւելքի կարգ մը հիւրընկալ երկիրները կը թոյլատրէին Հայեցի դաստիարակութիւնը, իսկ Լիբանանի պարագային Հայկական Համայնքին՝ սահմանադրական իրաւունքներէն մէկն էր, ու բարեբախտաբար տակաւին կը մնայ այդպէս:

Լիբանանի քաղաքական ու ընկերային համայնքային դրութեան մէջ, Հայերը բացառիկ առիթը ունէին զգալու ու գործելու որպէս առանձին համայնք ու անկաշկանդ կազմակերպելու իրենց ինքնութեան պահպանման միջոցները: Յեղասպանութեան առթած առհաւիրքը վառ կը մնար յիշողութիւններու մէջ, զոր պայման էր շրջանցել՝ նոր սերունդներու վերապրումով: Ազգային պատմութիւնը իր առասպելական սկզբնաւորութեամբ, դիւցազներգութիւններով, հերոսական գոյամարտերով ու մշակութային հարուստ ժառանգով կը մնար հպարտութեան աղբիւր ու հիմնական ազդակ՝ ինքնութեան պահպանման:

Լիբանանահայ տարագիր համայնքը, իր կազմաւորումի հանգրուանին, կը պարզեր ընկերային ինքնամփոփ դրութիւն մը, բնակութիւն հաստատելով որոշ ու սահմանափակ աշխարհագրական տարածութիւններու վրայ որոնք պիտի կոչուէին Հայկական Թաղեր, իրենց բնակիչներուն նախկին բնավայրերուն անուանակոչումներով:

Պէյրութի արեւելեան թաղամասերը կը կոչուէին, Կիլիկիա, Նոր Ատանա, Նոր Հաճըն, Նոր Մարաշ, Նոր Սիւ, Նոր Թումարգա ու նախկին հայրենակիցներ, նոյն ընտանիքի անդամներ ու ազգականներ, կը բնակէին նեղ փողոցներու վրայ շինուած համեստ տուներու մէջ, կազմելով բնակչութեան բացարձակ մեծամասնութիւնը: Տարագիր երեց սերունդի խօսակցական տիրապետող լեզուն կը մնար Թրքերէնը, իր երգերով: Մինչեւ 1956, Արաբերէն լեզուն անհրաժեշտութիւն մը չէր, նկատի առնելով համայնքին ընկերային ինքնամփոփ ու տնտեսական ինքնաբաւ բնոյթը:

Համայնքին ֆիզիքական ապահովութիւնն ու ընկերային կազմակերպութիւնը կը նկատուէին հիմնական առաքելութիւններ:

Կարճ ժամանակի ընթացքին, ամէն թաղ կ'ունենար իր եկեղեցին ու յարակից դպրոցը, ինչպէս նաեւ կուսակցական կեդրոնատեղիներ ու ապա ակումբներ: Որպէս արհեստաւորներ ու մանր վաճառականներ, սկզբնական շրջանին, կարիքը չէին զգար ընդարձակելու իրենց տնտեսական փոխ-յարաբերութիւնները դաշտը:

Համայնքային կրօնական ու ազգային տօներ, սովորութիւններ, կենցաղ ու աւանդական արժէքներ կը պահէին իրենց կեդրոնաձիգ իւրայատկութիւնը: Ընկերային զօրակցութիւնը կը դրսևորուէր նախ թաղային ու հայրենակցական պատկանելիութիւններով ու ապա՝ կուսակցական: Յատկանշական է յիշել, այն բնագոյնական հակազդեցութիւնը, որ գոյութիւն ունէր մինչեւ 1950-ական թուականները, ինքնաշարժի հագուադէպ արկածի մը պարագային առաջին հարցումը կ'ըլլար, արդէնք արկածեալը Հայ էր:

Խառն ամուսնությունները աներեսակալելի էին ու գրեթե գոյություն չունեին:

Կազմաւորումի շրջանին, անհատը բնականօրէն կը կառչէր իր պատկանած հաւաքանութեան ղեկավարութեան, որպէս ապահովութեան խարխիս ու քաղաքական ուղղեցոյց:

Օրէնքները կը մնային պարզ ու հասարակական ու ընտանեկան հարցերը կը լուծուէին համայնքի ծիրէն ներս, յարգարժան անձնաւորութիւններու պարզ թելադրանքով ինչպէս նաեւ երբեմն՝ կուսակցութիւններու ուժական միջամտութեամբ:

Ապրելով բոլորովին Հայկական փակ շրջանակի մէջ, Արաբերէն լեզուի գործածութիւնը էական չէր նկատուէր մինչեւ Լիբանանի անկախութեան հռչակումը ու աւելի ուշ: Մինչ այդ, Ֆրանսերէն լեզուն կը մնար տիրապետող, տեղական որոշ ընկերային շրջանակներու մէջ, նոյնիսկ արաբերէնի պետական պաշտօնական լեզուի հռչակումէն ետք:

Արաբերէն լեզուի տգիտութիւնը, մինչեւ 1960-ական թուականները, տնտեսական նոր մարզերու որոնումին ու կառավարական պաշտօններու տիրելու մտադրութեան ու կարելիութեան առջեւ կը մնար կարելոր խոչնդոտ մը:

Կայացման ու զարգացման շրջանին ամէնէն էական իրագործումներն էին. Տարագիր Հայ հաւաքականութիւններու կեանքի ու ապրուստի ապահովութիւնը հիւղընկալ երկիրներուն մէջ, հաւաքական զօրակցութեամբ ստեղծելով կազմակերպչական բազմազան միջոցներ ու կառչելով անցեալի մասունքներուն, հաւատալով վարդազոյն արշալոյսներու:

ՁԱՐԹՕՆՔԻ ՇՐՋԱՆ

Լիբանանահայ համայնքը, քառասուն տարուան ընթացքին, կը վերածուէր տնտեսական կարելոր ուժի, իր համալսարանական շրջանաւարտ մասնագէտներով, ազատ ասպարէզի յաջողութիւններով, մանր ճարտարարուեստի ու առեստուրի ձեռնարկութիւններով ու աւելի ուշ շիրարարական գործառնութիւններով:

Հակառակ ներքին գաղափարախօսական հակասութիւններուն, քաղաքական հակամարտութիւններուն, կուսակցական արտաքին ու ներքին պայքարներուն, եկեղեցական տաքնապին, երբեմն եղբայրասպան փողոցային կռիւներուն, ներ-համայնքային բաժանումներուն, Հայկական կրթական օճախները կ'ապրէին իրենց ոսկեդարը, աշակերտութեան թիւով ու հայեցի դաստիարակութեան հաւատաւոր ծնողներով ու աշակերտներով:

Մշակութային մարզին մէջ, Լիբանանեան մակարդակով, զանազան Հայկական կազմակերպութիւններ ու անհատ արուեստագէտներ, իրենց ցայտուն ներդրումը կ'ունենային, մանաւանդ՝ երաժշտութեան, կերպարուեստի, դատրոնի, երգի ու պարի մարզերուն մէջ, ստեղծելով մնայուն խանդավարութիւն: Երկրորդ սերունդը կը հպարտանար իր մամուլով, նուիրեալ ուսուցիչներով, գրողներով, թատրոնով, երգի ու պարի խումբերով, նկարիչներով ու երաժշտութեան բոլոր մարզերու արուեստագէտներու յաջողութիւններով: Մշակութային ինքնութիւնը կը հաստատուէր իր ստեղծագործական յատկանիշներուն որակական աւելի բարձր մակարդակով, բաղդատմամբ արուեստի տեղական այլ արտայայտութիւններուն:

1965-էն ետք, ազգային պահանջատիրութեան ամէնէն ազդու միջոցը կը նկատուէր ահաբեկչական գործողութիւններու սթափեցնող ազդեցութիւնը ներքին եւ արտաքին ճակատներու վրայ: Յիսուն տարիներու վերապրումի լուռ ցաւերը կը ստեղծէին փաղանգ մը նոր հերոսներու, որոնք իրենց անձնագոհութեամբ նոր աւիւն կը հայթայթէին այլապէս ինքնամփոփ ու կուտորական հաւաքականութիւններու ու իրենց պոռթկումով կը ցնցէին

միջազգային հասարակական կարծիքը, ցոյց տալով որ կայ ու կը մնայ ցեղասպանութեան անլոյծ դատ մը եւ մանաւանդ՝ վճռական դատատէրեր:

Տասնամեակ մը ամբողջ, Լիբանանահայութիւնը կ'ապրէր իր հաւաքական ու անհատական զարթօնքը: Կը հպարտանար իր մշակութային իրագործումներով, վստահութիւն ունէր իր ղեկավարութիւններուն հանդէպ, Հայկական Ցեղասպանութեան Յիսնամեակը ստեղծած էր համագաղութային զօրաշարժ: Տեղի կ'ունենային զանազան կուսակցութիւններուն պատկանող երիտասարդներու համախմբումներ՝ ազգային հիմնահարցերու շուրջ, երբեմն հալածանքի ենթարկուելով բոլոր կուսակցութիւններու ու կազմակերպութիւններու ղեկավարութեան կողմէ: Այդ շրջանին, Հայ ըլլալը հարցականի ենթարկուած չէր տակաւին, այլ՝ բնական անհրաժեշտութիւն մըն էր, ներկայ ըսելու յարմար ժամանակին, ու միջազգային բեմերու վրայ պաշտպանելու մեր ազգային անկոռնչելի իրաւունքները:

ՁՈՒՆՈՒՄԻ ԿԱՍ ՎԵՐԱՊՐՈՒՄԻ ՇՐՋԱՆ

Մինչեւ 1992, Սփիւռքահայութիւնը իր երրորդ սերունդով, ըստ տեղական կարելիութիւններուն, տակաւին կը կառչէր իր ուրոյն ինքնութեան ու ներշնչուելով Հայաստանի մշակութային հպարտութեան աղբիւրներէն կ'ապրէր հաւատաւոր, շինարար գոյամարտի շրջան մը, միաժամանակ երազելով քաղաքական անկախութեան երանելի օրուն:

Այժմ, անկախութենէն տասնամեակ մը ետք, երազը վերածուած է ամէնօրեայ դառն սակայն յուսալից իրականութեան, իր տնտեսական ու ընկերային դժուարութիւններով: Մշակութային հպարտութեան աղբիւրները գունաւորուած են օտարամուտ տարբեր արժէքներով: Բաղաքական, գիտական ու արուեստի մարզերուն մէջ, համաշխարհային համբաւ վայելող Հայ անձնաւորութիւններու թիւն ու որակը կրած են մեծ անկում: Իսկ Սփիւռքահայութիւնը, իր տարտղնուած բազմատեսակ հաւաքականութիւններով, կեդրոնական գերագոյն ղեկավարութեան մը բացակայութեան, խարխաբանքով կը փորձէ դիմագրաւել բազմաբնոյթ գոյութենական ու մշակութային վտանգներ:

Սփիւռքի երրորդ եւ չորրորդ սերունդներուն համար, ազգային հաւաքական ու անհատական ինքնութիւնը նոյնը չէ ինչ որ էր առաջին եւ երկրորդ սերունդներուն պարագային: Ինքնութիւնը կազմող հիմնական տարրերը՝ ազգային հաւատք, նպատակ, մտայնութիւն, ասանդական սովորութիւններ, արժէքներ, ընկերային վարք ու բարք, տնտեսական կարգավիճակ եւ մշակութային ժառանգք, ժամանակի ընթացքին, էական փոփոխութիւններու ենթարկուած են տարբեր միջավայրերու ու պայմաններու ազդեցութեամբ: Մինչդէռ՝ նոյն ժամանակամիջոցին մեր ազգային կառոյցները մնացած են ինչ որ էին տասնեակ տարիներ առաջ, իրենց վարչական անյարմարութիւններով, ստեղծելով խորացող խրամատներ տարբեր սերունդներու հետաքրքրութիւններուն, կարողականութեան ու ակնկալութիւններուն միջեւ:

Հետեւաբար, բոլորս մտահոգ ենք ու կ'ափսոսանք հաստատելով թէ մեր դպրոցներուն աշակերտութեան ընդհանուր թիւը տարուէ տարի կը նուազի, մեր երբեմնի նախանձելի մշակութային շարժումները վերածուած են տարեկան ձեռնարկներու, մամուլն ու գրականութիւնը լուռ ցաւերով կը տառապին, ակումբներուն մէջ պատանեկան եւ երիտասարդական շարժումները կորսնցուցած են իրենց նախկին խանդավարութիւնն ու ընդհանուր անտարբերութիւն մը կը տիրէ մեր համայնքային ու միութենական գործունէութիւններուն նկատմամբ:

Որպէս տարբեր երկիրներու քաղաքացիներ, ժամանակի ընթացքին, մեր ազգային ինքնութեան յեղաշրջումն ու աղաւաղումը անխուսափելի է: Միաժամանակ, պատկանիլ հաւաքականութեան մը, բնագոյական ապահովական պահանջք մըն է ու ընկերային իրողութիւն: Ի՞նչպէս կարելի է հաշտեցնել այդ երկու հակոռոնեայ մղումները, դրական ձեռով, անյետաձգելի մարտահրաւէր մըն է որ Սփիւռքի ազգային ղեկավարութիւնը պէտք է դիմադարձէ, ի շահ ամէն Հայ անհատի եւ Հայաստանի Հանրապետութեան: Կարելի է պահպանել Սփիւռքի Հայկական գաղութներու մշակութային ինքնութիւնը, բարելաւելով

անոնց տնտեսական ու ընկերային համակարգը եւ վերակազմաւորելով հասարակական կեանքի ոլորտները, համերաշխ գործակցութեան ու զօրակցութեան գաղափարը վերածելով անհատական ու հաւաքական յառաջդիմութեան հիմնաքարի:

Սփիւռքի տարածքին, հայապահպանման աւանդական միջոցներու - լեզու, եկեղեցի, ընտանիք, դպրոց, քաղաքական կազմակերպութիւններ, մշակութային միութիւններ եւ ակումբներ - կողքին, նոր եւ գործնապաշտ միջոցներ պէտք է այլապէս բաւարարեն գոյութենական պէտքեր ու իղձեր, զօրացնելով կապը անհատներու միջեւ որոնք հպարտ ըլլան իրենց պատկանելիութեամբ, եւ որոնց համար Հայ ըլլալը ունենայ նաեւ գոյութենական առաւելութիւններ: Այդ սէկը կարելի է իրագործել երբ ներքին նպատակասլաց զօրակցութեամբ կարենանք օգտագործել մեր անհատական, ընկերային, տնտեսական ու քաղաքական բարեկամութիւններն ու փոխ-շահաւէտութեան վրայ հիմնուած միջազգային կապերը, կազմակերպուած լոպիինկի միջոցներով, բարձրագոյն մակարդակներու վրայ ու շրջանակներու մէջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Բազմաթիւ փոքր ազգեր, կը դիմագրաւեն սաստկացող արտաքին սպառնալիքներ, ուղղուած իրենց աւանդական բարոյական արժէքներուն: Ինչպէ՞ս կարելի է հաշտեցնել երկու հակոտնեայ իտեււներ. ազատ շուկայական նկատառումներու վրայ հիմնուած միաձուլող ընդհանրական արժէքներն ու տոհմիկ ինքնութեան բնագոյական պահպանմանումը: Շատ մը ազգեր որոնք այլեւս գոյութիւն չ'ունին, չեն անհետացած ֆիզիզապէս, այլ՝ պարզապէս կորսնցուցած են իրենց իւրայատուկ ինքնութիւնը:

Սփիւռքը իր հասարակական կառոյցներով տասնեակ տարիներէ իվեր կը շարունակէ կեդրոնանալ Հայապահպանման եւ ցեղասպանութեան ճանաչումի աշխատանքներուն վրայ որոնք իրենց ներկայ կրաւորական իրավիճակով վերածուած են գրեթէ ինքնանպատակ ծրագիրներու՝ վախճանական անորոշութիւններով: Հայապահպանումն ու ցեղասպանութեան ճանաչումը միջոցներ են հասնելու համար սահմանելի ազգային հիմնական նպատակներու, նոյնիսկ եթէ անոնք այժմ նկատուին՝ անկարելի երազներ: Հայապահպանումն ու ցեղասպանութեան ճանաչումը էական բայց հանգրուանային միջոցներ են վերագտնելու համար մեր անժամանցելի ազգային իրաւունքները պայմանաւոր կարենանք մշակել ապագայի համապարփակ ու գոնժնական ծրագիրներ:

Որպէս հետեւանք, բազմազան արտաքին ու ներքին իրադրութիւններու, Սփիւռքի գոյակիճակը կը գտնուի այնպիսի հանգրուանի մը, ուր ազգային ղեկավարութեան կարեւորագոյն ու անհետաձգիլի պարտականութիւնը պէտք է ըլլայ, դրական երկխօսութիւններով ու բազմակողմանի խորհրդակցութիւններով, հարցերու լուծման իրապաշտ հնարքներու որոնումը: Համայնքի միասնականութիւնը կը զօրանայ երբ դրական փոխ-յարաբերութիւններով, համայնքը կազմող անդամները կը գիտակցին ազգային հարցերու լուծման համար բոլորին գործունեայ մասնակցութեան կարեւորութեան: Գաղափարներու փոխանակումն ու նոյնանման զգացումներու բաժանումը, իրենց կարգին կը ստեղծեն ուժականութիւն ունեցող խումբի մը պատկանելու խրախուսանքը:

Անյապաղ, էական է որ համազգային համաձայնութիւն մը կայանայ ազգային հիմնական նպատակներուն եւ զանոնք իրագործելու աշխատանքին շուրջ, որպէս զի մեր համայնքային ծրագիրները ստանան նոր խորք ու նպակասլաց աշխատանքի արդիւնաւետութիւն:

Հատուած հետեւեալ անոնիպ ուսումնասիրութենէն
<http://www.gardentowerhotel.com/MBE-Content.htm>
[ARMENIAN DIASPORA - AGENDA FOR A NEW VISION - VERSION 3](#)